40 ՓԱՐԱ.

# ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| 1 Տարւոյ | Համար | Տաճկաստանի | 200 |
| » | » | Վեցամսեայ | 100 |
| » | » | Եռամսեայ | 50 |
| [illegible] | | | 240 |
| [illegible] | | | 120 |
| [illegible] | | | 56 |
| [illegible] | | | 28 |

Les annonces sont reçues à l'EASTERN AGENCY, Karakeuy, Déirmén han

غزته‌سی اداره‌سنه

Կառավարիչ՝ ԽՍՏՐԸՆ ԷՃԷՆՍԻ — գործակալութեան ձեռամբ, Ղալաթիա, Տէյիրմէն խան

Կ. ՊՈԼԻՍ
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 22 ՄԱՅԻՍ

## ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՎԻՔԴՈՐ ՀԻՒԿՈՅԻ

Դ.

Կարգն եկաւ խօսելու Վիքդօր Հիւկոյի գործունէութեան վրայ քաղաքական ասպարէզին մէջ։

Բայց նախ յիշենք թէ, Ակադեմիոյ անդամ ընտրուելէն քիչ ետքը, 1843ին, ուղեւորութիւն մ'ըրաւ օտար երկիրներ, գնաց մանաւանդ Սպանիա, ուստից յանկարծ Բարիզ կանչուեցաւ ընտանեկան ծանր կորստեան մը պատճառաւ։ Իւր դուստր՝ Լէօբոլտին՝ քիչ յառաջ ամուսնացած էր Պ. Շարլ Վաքըրիի հետ, և մինչ նորապսակ ամոլք առագաստաւոր մակոյկով պտոյտ մը կ'ընէին, մակոյկը շրջեցաւ, և երկուքն ալ խեղդուեցան։ Այս ցաւալի դէպք խորին վիշտ պատճառեց հօրն Սրտին մէջ, և անջնջելի տպաւորութիւն մը թողուց Բանաստեղծին մտաց վրայ, նիւթ մատակարարելով բազմաթիւ սրտաբուխ քերթուածներու, որք յետոյ մաս կազմեցին բանաստեղծական մեծ երկի մը, զոր Հիւկօ հրատարակեց Հայեցողութիւնք անուամբ։ Նախորդ տարին, 1842ին, իւր ուղեւորական տպաւորութիւններն ամփոփած էր նոր տեսակ երկի մը մէջ, Հռենոս անուամբ, յորում արուեստագէտն ու բանաստեղծը ձեռք ձեռքի տուած են յոյժ փայլուն նկար մը, յոյժ ընթեռնլի երկ մը արտադրելու համար։

1845ին Լուի Ֆիլիփ Թագաւորն այն ժամանակուան Ծերակոյտին՝ Աւագաց Ժողովոյն անդամ անուանեց զՎիքդօր Հիւկօ, և ամէն ինչ ցոյց կուտար թէ սա, իւր տաղանդով, համբաւով և օրինաւոր փառասիրութեամբ, օր մը նախարարական պաշտօնի պիտի կոչուէր, երբ 1848 Փետր. ի Յեղափոխութիւնն եկաւ նոր և աւելի խորտուբորդ ճամբայներ բանալ Բանաստեղծ-քաղաքագէտին առջեւ։

Լուի Ֆիլիփ լաւ խօստումներով սկըսած էր իւր իշխանութիւն։ Անարդարութիւն կը լինէր չխոստովանիլ թէ ինք իւր երկու անմիջական նախորդներէ՝ Պուրպոնեան գերդաստանի և րէց ճիւղին երկու վերջին ներկայացուցիչներէն աւելի լաւ ըմբռնած էր սահմանադրական Թագաւորի մը դերը։ Բայց Լուի Ֆիլիփ 1830ին ի գահ բազմած էր, և 1848ին միտքերը շատ աւելի յառաջդիմած էին, մինչ Թագաւորն՝ ապահով կարծելով իշխանութիւնն՝ ինքն եւ ժողովրդեան հետ յառաջդիմելու պէտքը չէր զգացած։ Աղատութեան նորանոր պահանջմանց դիմադրելու անխոհեմութիւնն ունեցաւ, և որչափ որ կրնար, ինչ ինչ ժողովրդային սատաբեալ արտօնութիւններ սեղմելու դժբախտ ձեռնարկը փորձեց։ Հետև-

[illegible]

## ԲԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

[illegible]

—)( 11 )(—

## ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

## ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼԸ

[illegible]

